



Մարդկային
զարգացման
միջազգային
կենտրոն

International
Center for
Human
Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԻՆՉՊԵՆ ՀԵՇՏԱՅՆԵԼ ԵՒ ԱՐԱԳԱՅՆԵԼ
ԵՎՐԱԿՆՏԵԳՐՄԱՆ ՈՒՐԻՆ

19 Ս ա յ ա թ Ն ո վ ա , Ե Ր Ե Լ ա ն

Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Նպատակ/միջոց ներդաշնակության խնդիրը

Պետական ամենատարբեր զարգացման ծրագրեր մշակելով, միջազգային կոնվենցիաների միանալով, նորանոր օրենքներ ու նորմատիվ ակտեր ընդունելով՝ մենք ամրագրում ենք հանրային կյանքի խաղի կանոնները, կանոններ, որ պիտի իրողություն դարձնեն ապագայի այն տեսլականը, որ մենք ընտրում ենք իբրև մեր զարգացման նպատակ: Թվում է, որ Եվրոպան՝ որպես նպատակակետ, այլևս մեզանում քչերն են մերժում կամ, համեմայնդեպս, ընդունվում է ամենաբարձր մակարդակի հայտարարությունների համատեքստում: Ստացվում է, որ մենք, մի կողմից, ունենք նպատակը՝ Եվրոպա, որն ունի խաղի իր կանոնները, մյուս կողմից, շարունակում ենք խաղի մեր կանոնների մշակման գործընթացը: Այդ դեպքում հարց է առաջանում՝ արդյո՞ք մենք ունենք հստակ այն մեխանիզմը, որ կարողանում է զտել ընդունվող որոշումները, ուղղորդել դրանք և ապահովել դրանց համապատասխանությունը նպատակին: Թե նպատակը Եվրոպան է, խաղի կանոններն էլ պիտի Եվրոպականը լինեն, սա է ասում տրամաբանությունը:

Հեծանիվ հորինելու փոխարեն

Այս պայմաններում մենք, թերևս, ունենք ընտրության երկու տարբերակ.

1. բոլոր ընդունվող որոշումները, օրենքներն ու նորմատիվ ակտերը փորձաքննություն են անցնում հատուկ ստեղծված մարմնի կողմից՝ ստուգելու դրանց համապատասխանությունը Եվրոպական օրենսդրությանը,
2. վեր ենք հանում մեր և Եվրոպական օրենսդրությունների տարբերությունները, խմբավորում ենք և սկսում դրանց արագ ընդունման գործընթացը՝ միաժամանակ զարգացնելով դրանց իրականացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողություններ:

Անշուշտ, հնարավոր է, թերևս նաև ցանկալի է, երկու տարբերակները համատեղել՝ անցումային փուլում հնարավոր կրկնաշխատանքներից խուսափելու համար:

Առաջին (էքստենսիվ) տարբերակն, անշուշտ, հրատապ է դառնում, քանզի ամեն օր մեզանում շարունակվում են բազմաթիվ նոր նորմատիվ ակտեր ընդունվել, որոնք, համատասխան փորձաքննություն չանցնելով, շատ շուտով կարող են հայտնվել վերանայման անհրաժեշտության առջև: Եվրախնտեզրման ուղին բռնած Ուկրաինայում, օրինակ, պառլամենտում այսօր գործում է Եվրախնտեզրման հարցերով հանձնաժողով, որն առաջարկվող ցանկացած օրենսդրական մախագոփ վերաբերյալ ներկայացնում է փորձագիտական կարծիք՝ տվյալ մախագիծը համեմատելով ԵՄ իրավական ակտերի հետ:

Երկրորդ (ինտենսիվ) տարբերակը ենթադրում է արագ և նպատակային ընդօրինակում: Ճիշտ է, դրա համար հարկ կլինի մեծածավալ աշխատանք կատարել՝ ուսումնասիրելու ու համեմատելու ՀՀ և ԵՄ օրենսդրությունները, վեր հանելու տարբերությունները և դրանք հարթելու ժամանակացույց մշակել, սակայն ուրախալին այն է, որ այդ աշխատանքը Հայաստանում արդեն իսկ կատարված է:

Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման Ազգային ծրագիրը

Գործընկերության և համագործակցության համաձայնագրի իրականացման Ազգային ծրագրի (ԱԾ) նախագծի մշակման աշխատանքները Հայաստանում սկսվել են դեռևս 2004 թվականի հունվար-փետրվար ամիսներին: AEPLAC-ն ընտրվեց որպես տեխնիկական աջակցություն ապահովող մարմին: Ստեղծվեցին տարբեր գերատեսչություններից կազմված կոորդինացիոն խորհուրդ, ինչպես նաև 24 աշխատանքային խմբեր, որոնք պատասխանատու էին ծրագրի համապատասխան թեմաների մշակման համար: Ընդհանուր առմամբ ծրագրի մշակման աշխատանքներին մասնակցել է 250 մարդ: Տարբեր փուլերում աշխատել են նաև 50 փորձագետներ:

Արդյունքում մշակվել է ծավալուն մի փաստաթուղթ, որտեղ դիտարկվել են համապատասխան ԵՄ և ՀՀ օրենսդրական ակտերը և համադրության արդյունքում մշակվել են ԱԾ խնդիրները և դրանք հասցեագրելու համապատասխան միջոցառումների ցանկը: Արդյունքում ստացվել է մի ծրագիր, որը չի զիջում վերջին տասնամյակում ԵՄ անդամ դարձած երկրների գործողությունների ծրագրերին, իսկ որոշ իմաստով, նույնիսկ մեկ քայլ առաջ է այն պարզ պատճառով, որ այստեղ հաշվի է առնված նույն ուղին անցած երկրների փորձը:

ԵՄ օրենսդրությունը բավականին հստակ դրույթներ է պարունակում և համապատասխանեցում նշանակում է նման հստակ դրույթների ներմուծում նաև ՀՀ օրենսդրության մեջ: ԱԾ-ն ընդամենը սահմանում է այդ հստակ կանոնները: Հետևաբար որքան շուտ այն ընդունվի, այնքան օրենսդրական փոփոխություններ կատարելու, ինչ-ինչ հանձնաժողովներ ստեղծելու հաճախակի անհրաժեշտությունն էլ ինքնըստինքյան կվերանա: ԱԾ-ը փաստորեն ամբողջ դաշտի համար կծառայի որպես կոորդինացիոն մի համակարգ:

Ավելին, Ազգային ծրագիրը, փաստորեն, կարող է ծառայել որպես յուրօրինակ համակարգող մի մեխանիզմ, որի արագ և արդյունավետ իրականացումը խթան և քարշիչ կհանդիսանա ողջ դաշտն առաջ տանելու համար:

Համառոտագիրը մշակվել է ՄՁՄԿ 2005թ-ի նոյեմբերի 11-ի Ազգային ծրագրի «Մոցիալական քաղաքականություն և զբաղվածություն» գլխի քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման դեպարտամենտի աջակցությամբ: